

ԵՍ ԵՄ
Յարութիւնը ու կեանքը,
Ան որ ինծի կը հաւատայ,
Թէ եւ մեռնի՝ պիտի ապրի,
Եւ
այն ամէնը որ կենդանի է
ու ինծի կը հաւատայ,
յաւիտեան պիտի ջմեռնի :
Յովհ. ԺԱ. 25-26

ԲԱՆԲԵՐ

ՀՈԳԵՒՈՐ ԱՄՍԱԹԵՐԹ
ԱՄԵՆՈՒՆ ՀԱՄԱՐ

ՄԻ՝ ՎԱՆԱՐ
Ես եմ Առաջինը ու Վերջինը,
Եւ ես կենդանի եմ
յաւիտեանս յաւիտենից,
Եւ
Էս ունիմ մահուան ու
դժողքին բանալիները :
Յայտ. Ա. 17-18

“ PANPÈRE ” REVUE MENSUELLE RELIGIEUSE ARMÉNIENNE

Բաժնեգին տարեկան.— Ֆրանսա եւ Սուրիա 5 ֆր. Արտասահման 1,50 շիլ. կամ 40 ամերկ. Սէնթ-
RÉDACTEUR H. N. GHAZAROSSIAN, 29, Rue Fauchier — MARSEILLE (France)

ԹԻԻ 4

Դ. ՏԱՐԻ

ԱՊՐԻԼ 1928

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ԱՆՈՐ ՅԱՐՈՒԹԵԱՆ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

Ինչ որ ինծի շահ էր, զանկա Քրիստոսի համար մասս սեպեցի եւ իրաւ բոլոր
բաներն ալ մասս կը սեպեմ . . . ճանչնալու զԱնկա եւ Անոր յարութեան
զօրութիւնը եւ Անոր չարչարանքներուն հողորդ ըլլալը, Անոր մահուան կեր-
պարանքը առնելով, որ ըլլայ թէ մեռելներուն յարութեանը հասնիմ :

ՓԻԼ. Գ. 7-11

Որդին հասկցաւ Հօրը ծրագիրները, եւ տեսաւ որ
ստեղծուելիք մարդկութիւնը մահէն ազատելու համար
ուրիշ ճար մը չկար լծէ ոչ կատարել ամենամեծ զոհու-
ղութիւնը, զոր տիեզերք երբեք ճանցած էր ու պիտի
ճանցնար. Նա գիտցաւ. Թէ այս մեծ զոհողութիւնը բուն
իսկ իրմէ կը պահանջուէր, որովհետեւ տիեզերքի մէջ
չկար ոեւէ ուրիշ մէկը, ո՛չ ալ ամենամեծ հրեշտակա-
պետն ու քերովրէն, որ կարող ըլլար այս մեծ պատա-
խանատու պաշտօնը ի կատար հանել : Նա գիտցաւ. Թէ
«Աստուած իմ Աստուած իմ ինքն» զիս Թողուցիր» ազա-
ղակելու աստիճան Հայրը պիտի լքէր զինք եւ պիտի
մասնէր մահուան, ու այն ալ խաբին մահուան, այսու
ամենայնիւ. ազատ կամքով ի սէր մարդկութեան եւ
ի սէր Հօրը իր «Այո»ն ըսաւ : Այս մեծ զոհողութիւնը որ-
քան մեծ էր Որդիին համար, նոյնքան ծանր էր Հօրը հա-
մար, այս պատճառաւ. Նա Որդւոյն նուիրման գործողու-
թիւնը հաստատեց անով, որ խոստացաւ զինքը յարուցա-
նել եւ իր Սուրբին ապականութիւն տեսնել չտալ : Յա-
րուցանելու այս գործողութիւնը Որդիին փրկագործութիւնը
հաստատած եւ Անոր արժէք ու անասման զօրութիւն
պարզեւած է :

Յարուցեալին զոհաբերութիւնը զօրութիւն ունի : Անոր
կանգնող ամէն ոք կրնայ վստահ ըլլալ լսուելու, վստահի
կը կանչենք զԱյն որ կ'ապրի : Իր մահէն մահ ներարկած
է մեր ազատական էութեան մէջ եւ յարութենէն յարու-
թիւն առ ի նոր, երանելի ու յաղթական կեանք : Արդ,
մենք կը խաբուինք Անոր հետ այս աշխարհի համար, կը

մեռնինք Անոր հետ հաւատքով, կը Թաղուինք ու յարու-
թիւն կ'առնենք Անոր հետ հաւատքով, նոր — հաւատա-
քի կեանքին համար :

Այս նոր կեանքէն յետոյ է որ պատեհութիւն կ'ու-
նենանք զԱնկա աւելի մօտէն ճանչնալու : Շատեր փրկիչ
մը ունին, որ միայն մեղք ներող է, բայց մեղքերէն
ազատուելու վստահութիւնը վայելել կը նշանակէ փրկու-
թեան գործին, անոր զօրութեան միայն մէկ մասին տեղ-
եակ ըլլալ : Որդին ոչ միայն մեր հաշտութեան, մեր մեղ-
քերու ներման, մեր արդարացման համար եկած է, հասա-
նաեւ մեր Սրբութեան համար :

Շատեր իրենց անձնական մեղքերու քառամեամբը
կը գոհանան, եւ անոր կառքած, անով կը սնանին տա-
րիներ եւ տասնեակ տարիներ, բայց ասոնք գիտնալու են
որ այդ յենարանն ալ կրնայ տկարանալ եւ զիրենք ցաւե-
րու մասնել, մանաւանդ որ պատեհութիւն չեն ունենար
փրկութեան կեանքը կատարելապէս վայելելու : Ուրիշներ
զգացական կեանքի սահմանէն երբեք դուրս չեն ելլեր
ճշմարիտ հոգեւոր կեանքին լայն ասպարէզները մտնելու,
այս պատճառաւ. ամէն օր տկար կը զգան, ամէն օր մեղ-
քի հետ գործ ունին, կը պայքարին երբեմն հովը ծեծե-
լով, կը ջարջարովն առանց այդ ջարջարանքին պառ-
ճառն իսկ հասկնալու : Ա՛րդ, Տէրոջը փափաքն է որ
զգացական կեանքը կարելի եղածին չափ շուտով Թօժա-
ված հոգեւոր կեանքի սկսին իր զաւակները : Զգացում
ներդր. տաքութեան աստիճանը յարափոփոխ է, հոգեւոր
կեանքը — հաւատքի կեանքը միայն հաստատուն է :

Երբեք խոնարհութիւն չնշանակիր, երբ մենք ամէն օր մեր անցեալ մեղքերուն համար Թողութիւն խնդրենք, եւ ամէն օր խոնարհութիւնով ապաշխարենք ամէն օր մեր մեղքերը Թուենք Տէրոջը առջեւ, ամէն օր ակարութիւն եւ խեղամիտութեամբ վիճակ մը ներկայացնենք Տէրոջը: Ընդհակառակն, Տէրը կ'ուզէ որ Բնութեան համար (Ք. Տիմ. Գ. 7): Վերը յիշուած վիճակը Տէրոջը արեւան հանդէպ անվստահութիւն է, մարդկային հպարտութեան ուրիշ մէկ երեսնէն է, որ քիչով կը քառականանայ: Իր Թէ Նա Որդին տալէն յետոյ անկի բաներ ալ ջղիտի պարգեւէր մեզ, եւ չենք ուզեր սրբութեան կեանքին, Քրիստոսի գիտութեան անհատկի Գիտութեան հասնիլ եւ Անոր շնորհաց անստեղծութենէն վայելիլ առատութենէ:

Աստուծոյ գետը (չրհորը) ջրով լցուն է (Սաղմ. ԼԵ. 9):

Պողոս սրբաշուն առաքեալ արդէն ճանաչած է Որդին, որ հաշտարար արեւմտին ներսած է իր մեղքերը, ողորմութիւն գտած է, հակառակ որ Տէրոջը քաջ վիճակէն մէկուն մահուան կամակից գտնուած է: Իր առջեւ բացուած դուռ մը դրուած է, զոր մէկը չկրնար գոցել: Այստեղ ամենայնիւ դեռ անկի յաւ ճանչնալ կ'ուզէ զԱն, անկի լաւ ըմբռնել, Անոր գերազանց գիտութեան անդնակ ըլլալ, Անոր սիրոյն ու սիրոյ զօրութեան մասնակցիլ: Այս պատճառաւ մեր մեծ եղբայրը Նոյնիսկ Թուլատրելի բաներն (ինչ որ իրեն շահ էր) Քրիստոսի համար վնաս սեպեց, եւ անդնակութիւն (աղբ) սեպեց, որպէսզի փառաւորեալ Քրիստոսը լման շահի, զԱն իրենն ընէ, իւրացնէ Յարուցեալն իր յաղթական փառքովն ու Նորաստեղծ զօրութեամբը:

Քրիստոսի գիտութիւնը չէ գլխաւ, մաքի բանակաւ, նուազանք գործ: Անիկա ճանաչում մըն է գործնական, փորձառական կեանքով, ապրելով: Կր նշանակէ ամեն նամոտեմք յարաբերութիւն, միութիւն Քրիստոսի հետ, որմէ կը ճառագայծէ կեանք, զօրութիւն եւ փառաւորութիւն: Յարութեան զօրութիւնը Յարուցեալին յարութիւն առնելովը կը փոխանցուի Անոր հաւատացողներուն:

Կեանքի աղբիւր եւ կեանք եղողին կենսատու զգալարաններով իր խօսքը, իր արիւնը, իր հոգին կը ներմուծուին իր հաւատացեալներուն մէջ առ ի գործնական կեանք հոգեւոր զգալարաններու միջոցաւ, որոնք են հաւատք, վստահութիւն, հնազանդութիւն:

Արդ, քանի որ Որդին իր Աստուծոյ գետը, աշխարհի մեղքը վերցնելու համար գոյի սեղանին վրայ բարձրացաւ ու կատարեց մահը եւ իրեն հակառակ եղող ամէն իշխանութիւն եւ զօրութիւն խաչատաակեց, ուրեմն ապամական կեանքն ու մարմնի ու ետի կեանքն Անոր մահովը Թաղուցան: Ուստի եւ ալ չեմ ապրիր եւ չեմ ալ ուզիր ապրիլ կեանքը ճեւալին, որ ամէն ինչ իր շուրջը ենթարկել կ'ուզէ, իրաւունքի, փառքի, գնահատութեան, վարձատրութեան, յաջողութեան եւ վայելքի անյագ պահանջներով: Ինչ որ ճեւալին հետ ունէ մասով գործ ունի, Քրիստոսի հետ մահուան անցած է: Այս է ահա կեանքը, զոր կ'ընդգրկենք, եւ ընդգրկելու ենք զայն ամէն օր Նոր որոշումով:

Քրիստոսի Յարութեան կեանքը սրբութեան եւ սրբացման կեանքն է, փառաւորութեան, օրհնարանութեան յաղթական կեանքը, որ իրեններուն մէջ կը ներգործէ խոնարհութիւն, համբերութիւն, հեզութիւն, մարութիւն, յաղթականութիւն ու սէր:

Մինչեւ ստացուածքին լման փրկութիւնը, մինչեւ որ մահուամբ մեր Տէրոջը փառաւորեալ մարմնոյն նմանութիւնը հագնենք, ստիպուած ենք բնականաբար ամէնօրեայ պայքարի կեանքը մղել մեղքին դէմ եւ կեանքի գործերը սպաննել (Հռ. Ը. 14): Այստեղ հանդիպում արտահայտելու եւ բացարձակ իրաւունքն ունենալ Վարդեալին այս կարողութիւնները հագնելու, զանոնք որդեգրելու, մինչեւ որ ամենք մեր մէջ ըլլան նկարագրի ազատութիւն եւ յաղթականութիւն, մինչեւ որ ամենք ներարկուին մեր արեւան ու բնաւորութեան խառնուածքին: Անոր հաւանքաւ համար հարկ է անշուքոյդ հաւատք, հաստատուն որոշում եւ առանձնական աղօթքի կեանք: Այսպէս ապրող մը ամէն օր Նոր եռանդով եւ զօրութեամբ կը պարարուի, կ'առաջնորդուի Անիկ յաղթանակէ յաղթանակ, կեանքի ամէն պարագաներուն մէջ մինչեւ որ հասնի փառքէ ի փառք:

Քրիստոս կ'ապրի, կը յաղթէ, կը տիրէ:

Իրեններն ալ յարութիւն սխալ առնեն իր գալստեան օրը: Անիկա սխալ գայ իր խաղաղութեան դարաշրջանը սկսելու եւ իրենները մեռելներէն յարուցանելու, որպէսզի իրեն հետ մէկտեղ Թագաւորին:

Առաքեալը այս փառաւոր դիրքը միշտ իր առջեւ ունէր եւ անոր կը ձգտէր իր ամբողջ էութեամբը, հաղորդ ըլլալով Անոր շարժարաններուն, Անոր մահուան կերպարանքը առնելով, Անոր կրած նեղութիւններուն պակասութիւնը (յետ մ'նացածները, Թափփութները) իր մարմնին մէջ լցնելով, որպէսզի մեռելներէն (առաջին) յարութեան համէր:

Երանի՜ Թէ Աստուծոյ ժողովուրդին մէջ Թագաւորին փառաւորութիւնը, Անոր յարութեան զօրութիւնը անկի կազմաւորուէր եւ կատարեալ գործունէութեան հասնէր: Յաւատեալն փառք ըլլալ Յարուցեալին:

ՅԱՐՈՒՑԵԱԼ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԵՏ

ՀԱՂՈՐ ԴԱԿՑՈՒԹԻՒՆ

Աստուծոյ զաւակներէն Հասլամ անունով մէկը հեռեւեալը կը պատմէ: Օր մը շոգեկառքին մէջ նստած էի: Շոգեկառքը բաւական ճամբորդելէն ետք մօտեցաւ տեղի մը, ուր տարի մը առաջ մահուան անհարաւան ժողովներու միջոցին շատ օրհնուած էի: Երբ կայարան հասանք, պատուհանէն դուրս նայեցաւ նախորդ տարուան ծանօթ ղէմքերէն մին տեսնելու փափաքով, եւ ահա տեսայ նոյն ինքն այդ եկեղեցւոյն հովիւը: Բայց որչափ մեծ եղաւ իմ զարմանքս, երբ նա փոխանակ իմ քով տեղ մը դրաւ եւ սկսաւ ուրիշ վախճանի մէջ տեղ փոխել:

Մինչ այս մինչ այն, կայսրանին զանգակը զարկաւ եւ շոգեկառքը սկսաւ իր ճամբան շարունակել։ Ուստի անմիջապէս մեր վազօնը ցատկելով՝ անկիւն մը նստաւ եւ զիրք մը բանալով սկսաւ կարգաւ այնպէս ձեւացնելով իրը թէ բնաւ զիս ճանչցած չըլլար։ Քիչ ետքը իրեն մօտենալով հարցուցի թէ արդեօք ուրիշ զէպք մը կամ բան մը պատահած է մեր երկուքին միջեւ, վասնզի մենք անցեալին մէջ Տէրոջը զործին մէջ աշխատող երկու անկեղծ բարեկամներ էինք։

«Ո՛չ, բան մը չէ պատահած» ըսաւ եւ դարձեալ շարունակեց կարգաւ։ Այն ատեն ես կասեցայ թէ անշուշտ իմ մասին բան մը լսած է եւ անոր համար չուզեմ ու եւ զորք ունենալ ինձ հետ։ Մէկ ժամ անցնելէն ետք դարձեալ մօտեցայ իրեն եւ ըսի, «Խնդրեմ, ըսէ ինձ մեր անցեալ տարւածն Գործը ի՞նչ վիճակի մէջ է»։

«Դ՛րք, մասնաւոր Գործ մը՝ տեսնուած չէ, միայն ժամանակաւոր արժեւորութիւն մը»։

«Լաւ», ըսի. եւ ի՞նչ կզան այն հարցիները, որոնք Յիսուսի եկան եւ ապաշխարեցին»։

«Ի՞նչը ինչպէս եւ», հնչեց ձայնը։

«Ի՞նչ, ի՞նչպէս կ'ըլլայ այս»։

«Ես չեմ հաւատար որ անոնք ճշմարտապէս դարձի եկած էին» պատասխանեց։

«Անոնցմէ եւ ո՛չ մէկը» կրկնեցի, «եւ կրնամ անուններ թուել քեզի որոնք իրապէս դարձի եկած էին, ինչպէս եւ, բայց խնդրեմ, ըսէ ինձ, ի՞նչ կ'երակարծուի մտայնի դասերը»։ «Ես անոնց քարոզիչի Աւետարանը», ըսաւ եւ դարձեալ զիրքը ձեռք առաւ ցուցնելով թէ աւելի խօսելու տրամադիր չէր։

Ի՞նչ տեսակ Աւետարան մը քարոզեցիր անոնց, հարցուցի։ Այն ատեն զայրացմամբ պատասխանեց, «Միայն մէկ Աւետարան կայ»։ «Այո», ըսի, բայց այս մէկ Աւետարանը երկու մաս կը պարունակէ իր մէջ, մէկ մասը մեղաւորներուն համար եւ մէկ մասը դարձի եկողներուն համար»։

«Այդ մասին երբեք չլսած չէի»։

Այն ատեն ես ինքնիրենս ըսի, «հիմա ամենայարմար ժամանակն է այս կէտը հասկնելու» եւ իրեն դառնալով հարցուցի, ըսել է դուն թէ հաւատացեալներուն եւ թէ մեղաւորներուն նայն Աւետարանը կը քարոզես»։

«Ասով ի՞նչ ըսել կ'ուզես», ըսաւ։

«Ըսել կ'ուզեմ թէ դուն հաւատացեալներուն ալ կը քարոզես թէ Յիսուս իրենց համար մեղած է»։ «Անշուշտ, հապա ի՞նչ պիտի քարոզեմ անոնց»։ Բայց անոնք ստիկա արգէն շատանց գիտեն, վասնզի Անոր մահուամբ ազատուած են իրենք։ Հաւատացեալներուն Աւետարանը չձեռնարկէ Քրիստոս մեղած է, հապա թէ Քրիստոս յարուցելէն առաւ է եւ իշխանու-

թիւն ունի երկինքի մէջ ու երկրի վրայ։ Աւետարանը աւետիս կուտայ անոնց թէ իրենց Տէրը կարող է զիրենք պահպանել քոյր փորձանքներէն եւ իր գործին մէջ գործածել»։

Այս խօսքերուն վրայ բարեկամս զգալապէս հանդարտեցաւ. իրեն համար դժուար էր նախապաշարեալ խորհուրդներէն մէկէն հրաժարիլ, ուստի բարեկամական անյողգողդ ձայնով մը ըսաւ, «Ես քու ըսածներդ լման չհասկցայ, հաճիս աւելի պարզարանէ»։

Այն ատեն ըսի, «Քրիստոնեաները պէտք է կենդանի Քրիստոսը դաւանին։ Մենք շարաթուան ատաղին օրը կը տօնենք, վասնզի Քրիստոս այդ օրը մեռելներէն յարուցելէն առաւ»։ Քիչ մը մտածելէն վերջ պատասխանեց, «Այո», ստիկա ճշմարիտ է»։

«Երբ մեղաւորները մահուանէ կեանքի կը փոխուին, յարուցեալ եւ կենդանի Փրկչի մը պէտք ունին զիրենք ապահով առաջնորդելու իրենց սկսած նոր կեանքին մէջ։ Երբ դուն նորադարձներուն ուշադրութիւնը իրենց հաւատքին առաջնորդին՝ Յիսուսին չես դարձներ, անոնք կը ստիպուին իրենք զիրենք պաշտպանելու փորձեր ընել, որուն հետեւանքը կ'ըլլայ կամ անձնարգարութիւն եւ կամ յուսահատութիւն»։

Ան ինձի նայեցաւ եւ ըսաւ, հիմա կը հասկնամ թէ ինչ է իմ եկեղեցւոյ անդամներուն անկման պատճառը, անոնք ինձի կ'ըսեն, մենք քոյր ուժով կ'աշխատինք եւ կը ջանանք յառաջ երթալ, բայց չենք յաջողիր։ Անոնց խաղաղութիւնը վերջացած է եւ առաջուրնէ շատ աւելի մեծ փորձութիւններ պատած են զանոնք։

«Այո», այս այսպէս է, երբ մենք մեր խաղաղութեան կը վստահինք, զայն բոլորովին կը կորսնցնենք։ Մենք Անոր պէտք է հաւատանք որ կարող է մեր մէջ եղած խաղաղութիւնը պահպանել։ Նորադարձները երեք թշնամի ունին, ա. Աշխարհի անարգանքը. բ. Մարմնոյ դիմադրութիւնը եւ գ. Սատանային փորձութիւնները։ Ի՞նչ ընելու են ասոնց դէմ։ Բարեկամս լուեց։ Ես շարունակեցի ինչ աստիճանի որ մեղաւորը կրնայ ինքզինքը սրբել, նոյն չափով նորադարձ մը կրնայ ինքզինքը կանգուն պահել, բայց անոնք միայն այնչափ ատեն կանգուն կը մնան, որչափ ատեն որ քու գաւազանդ ձեռքիդ մէջ կը մնայ։ Գաւազանը ամուր բռնելու ես եթէ ոչ կ'իյնայ։ Ճիշդ նոյնն է խնդիրը անոնց համար ալ։

Հիմա բարեկամս խիստ մտածկոտ ինձի նայեցաւ եւ ըսաւ, «Երբեք խորհած չէի այդ մասին, խնդրեմ աւելի բացատրեցէք»։ Ես ըսի, «Մենք մեր դարձի եկած ատենը սովորաբար աւելի կ'ուրախանանք մեր ընդունած պարզեւի-

վրայ, քան թէ զայն Պարզեւողին վրայ: Նորա-
դարձները միշտ իրենց զգացումներով կը զբա-
ղին: Շատ աղէկ բան է երբ անոնք այս ուրա-
խութիւնը կը զգան եւ կ'արտայայտեն. միայն
թէ ատով բաւականանալու չեն, այլ պէտք է
գիտնան թէ տակաւին շատ շատ աւելին կը
կարօտին: Երբ մենք զանոնք չյորդորենք որ
իրենց ընդունած պարզեւէն աւելի, զայն Պար-
զեւողին նային, քիչ ատենէն այդ սուրբ զգա-
ցումները պիտի վերջանան եւ անոնք բոլորո-
վին յուսահատութեան պիտի մատնուին: Ոմանք
իրենց բոլոր ուժովը կ'աշխատին կրկին արթն-
նալ եւ ժամանակի մը համար մասամբ կը յա-
ջողին ալ, ուրիշներ այս քաջութիւնը չունին եւ
կ'իշխան: Ասիկա յառաջ կուգայ երբ մարդ իր
անձնական ուժովը կ'աշխատի փրկութեան այդ
վսեմ ուրախութիւնը կանգուն պահել: Եթէ
անոնք սորված ըլլային թէ Յիսուսի նման բարի
Հովիւ մը ունին որ իր ոչխարները կը հոգայ ու
կը պահպանէ, այն ատեն իրենց անձնական
գործերուն այլեւս կարեւորութիւն չպիտի տային
եւ իրենց յոյսն ու վստահութիւնը պիտի դնէին
միայն այս բարի Հովիւին վրայ»:

Այդ պարագային անոնք միայն հանգաւորտ
կենալու են, ուրիշ ընելիք չունին:

«Բաւելիցի», պատասխանեցի, «Ոչ ոք այնքան
եռանդուն գործի վրայ, է քան այն՝ որ այս հա-
ւատքին վրայ հիմնուած է: Քրիստոսի մէջ
հանգչիլ անգործութիւն չի նշանակեր, այլ բոլոր
հոգեւէն ու ծանրութիւններէն ազատուած՝ Անոր
կամքը կատարել: Տէրը այսպէս կ'ըսէ անոնց,
որ զգացումի կեանքը կ'ապրին եւ պարապ տե-
ղը ինքզինքնին կը յոգնեցնեն: «Ինծի եկէք, եւ
ես ձեզ պիտի հանգչեցնեմ, իմ լուծս ձեր վրայ
առէք եւ ձեր անձերուն հանգստութիւն պիտի
գտնէք»: Նորադարձները նոր ծնած մանուկներու
կը նմանին, որոնք սնունդի կը կարօտին մեծնա-
լու համար. անոնք պէտք է խօսքին անխա-
ղախ կաթովը սնանին եւ աճին. հետզհետէ
անոնք պէտք պիտի ունենան հացի, միսի
եւ ուրիշ հաստատուն կերակուրներու: Անխա-
ղախ կաթը անոնք կը գտնեն Տէր Յիսուսին
մէջ, որ երկիրքէն իջաւ եւ որ կենաց հացն է,
իսկ հաստատուն կերակուրը կը լուսաբանուի
Աստուծոյ խօսքովը. — «Իմ կերակուրս ան է որ
ես իմ հօրս կամքը կատարեմ»: Մեզի համար
ալ զօրաւոր կերակուրը այն է որ մենք Աստու-
ծոյ կամքը կատարենք»:

«Շատ պիտի փափաքէի որ անգամ մ'ալ
մեզի այցելէիք եւ կենաց հացը տայիք» ըսաւ
քարոզիչը: «Իմ գալս անհրաժեշտ չէ» ըսի, երբ
դուն Տէրմէն կերակուրուի, Ան քեզ պիտի
գործածէ նաեւ իր ժողովուրդը կերակրելու: Յի-
սուս հացը իր աշակերտներուն տուաւ եւ անոնք

ժողովուրդին տուին: Ես քեզի խորհուրդ կու-
տամ անոնց սորվեցնելու որ Կենդանի Քրիստո-
սին հաւատան եւ վստահին այնպէս, ինչպէս որ
կը հաւատան խաչեալ Փրկչին: Այսպէս սնու-
ցանէ զանոնք Աստուծոյ խօսքով»:

«Ես պիտի ջանամ զանոնք Տէրմէն խօսքին
մէջ հաստատել», ըսաւ քարոզիչը:

«Փառք Աստուծոյ» ըսի, «միայն թէ երբ
կ'ըսեմ թէ մարդիկ Աստուծոյ խօսքովը պէտք
է սնանին, ըսել չեմ ուզեր թէ միայն Սուրբ
գրքին մէջ յառաջանալու են, այլ անոնց ցու-
ցնելու ենք թէ անոնք Աստուծոյ խօսքը ընդու-
նելու եւ սեփականացնելու են իրրեւ հոգեւոր
սնունդ: Օրինակի համար, Իփրդ Սաղմոսը առ,
ցուցուր անոնց թէ Յիսուս է ամենամեծ Հովիւ.
սորվեցուր իրենց խնդրել Անկէ իրենց Հովիւը
ըլլալու, թող չգաղղին մինչեւ որ վստահաբար
կրնան ըսել, «Տէրը իմ Հովիւն է, ես բանի մը
կարօտութիւն պիտի չունենամ»: Կամ Գործք
Առաքելոց գիրքը առնելով՝ ցուցուր անոնց թէ
ինչպէս Աստուած տգէտ ու անուս մարդիկը զօ-
րութեամբ գօտեպնդեց իր գործը գործելու:
Քրիստոսի համար գործել քրիստոնեաներուն հա-
մար հանգստութիւն, կերակուր եւ զօրութիւն է:
Նաեւ պէտք է մշակել այն զգացումները որ
արթնութեան ժողովներու միջոցին կ'արթննայ
մէկին սրտին մէջ Քրիստոսի համար գործելու:

Քարոզիչը աւելի եւ աւելի հետաքրքրուեցաւ
իմ խօսակցութենէս եւ շատ ազաչեց որ եթէ
կարելի է, խոստանամ անգամ մ'ալ այցելել
իրեն եւ իր ժողովուրդին: Երբ ես հոն վացի,
ամէն բան ճիշդ այնպէս գտայ, ինչպէս կը սպա-
սէի: Մարդիկ ներքնապէս մեռած չէին, այլ
տկարացած եւ ետ գացած էին շիտակ առաջնորդ
մը չունենալուն պատճառաւ: Հոս հարցում մը
կ'եղլէ մէջտեղ, արդեօք անոնք Սուրբ գիրք,
եկեղեցի եւ այլն չունէին: Անկասկած ունէին
այս բոլորը: Բայց միայն արտաքինապէս Սուրբ
գիրք կարդալ, եկեղեցի երթալ եւ սուրբ հաղոր-
դութեան մասնակցիլը, իրապէս կենդանի եղող
հոգիի մը չկրնար յագուրդ տալ, պէտք է անձամբ
Աստուծոյ հետ յարաբերութիւն ունենալ, Անոր
նայուածքին հանդիպիլ եւ Քրիստոսը հաւատքով
իր մեր հոգիներուն կերակուրը ընդունիլ: Քրիս-
տոս է յարութիւնը եւ կեանքը: Ան ոչ միայն
մեռած հոգիներուն համար յարութիւն է այլ
նաեւ կ'եանք է կենդանի հոգիներուն համար:
Աստուած գիտէ թէ հաւատացեալները շատ ան-
գամ ինքզինքնին պաշտպանելու վիճակին մէջ
կը գտնուին, ինչպէս որ մեղաւորները գիշերք
փրկելու ջանքին մէջ, բայց անոնք պէտք է
ճանչնան յարուցեալ Քրիստոսը եւ Անոր մէջը
կենան: Թերեւս մէկը պիտի ըսէ թէ ես ատիկա
չեմ հասկնար. ասանկ մէկը պէտք է գիտնայ

որ այս բաները հասկնալու համար միայն մէկ ճամբայ կայ, ընել՝ ինչ որ զարեբու ընթացքին փրկեալները ըրած են, այսինքն յանձնուիլ Տէրոջը բոլոր սրտով, յոյն ատեն պիտի գտնէ ճշմարիտ խաղաղութիւն եւ կատարեալ երջանկութիւն :

Մեր քարոզիչը եւ իր եկեղեցիէն շատեր նոր քայլեր սկսան առնել Նոր Կեանքի մէջ եւ հասկցան թէ իրենց կեանքի այս փոփոխութիւնը նախկին ապաշխարութեան ժամանակ կրած փոփոխութենէն աւելի մեծ էր :


Միայն անոնք որ մեր մէջը բնակող Բրիտանոսի փրկութեան համը առած են, կրնան զիտնալ այս խօսքին խորունկ նշանակութիւնը թէ Բրիտանոս է միակ մեր ներքին երջանկութեան ակն ու աղբիւրը, որ մեր ներքին մարգուն աճումը կը զիւրացնէ եւ գորութիւն կուտայ իր զործին մէջ աշխատելու : Օ՛հ, այսօր ճանչնանք եւ ընդունինք զԱյն՝ իբրեւ մեր կենդանի Տէրը եւ Փրկիչը, զԱյն՝ որ ըսած է, «Ես» եւ յարութիւնը եւ կեանքը :

Թրգմ. գերմ.

Ե. ՏէՄԻՐՃԵԱՆ

— Ե Ր Ք —

ՍԻԱԳ ՀԻՆԳՇԱԲԹԻ ԳԻՇԵՐՈՒԱՆ



— ԳԻՐՏՆ ԳՐԻՍՏՈՍԻ —

1. Մեր գաղնուկին քիչ առաջ
Սիրտը մաշէր ի հառաջ,
Այս գիշերն էր որ երբէք,
Քուն չտեսաւ աչքերն իջք.

Ոլո՛ւն, ոլո՛ւն երբ կամէր,
Ո՛հ, իւր քրտինք վասն մեր : (Կրկն.)

2. Նա ցերեկը ո՛հ, աւա՛ղ,
Զ'ունէր բնաւ ժամ խաղաղ,
Բայց սոյն գիշերն անդադար,
Հրեշտակ մ'ունէր մխիթար.

Ոլո՛ւն, ոլո՛ւն երբ կամէր,
Ո՛հ, իւր քրտինք վասն մեր : (Կրկն.)

3. Մեր գաղնուկը սրտմագին,
Քիչ մը զատեց երեքին,
«Արթուն». ըսաւ Պետրոսին,
Ինչպէս ինք՝ վրայ երեսին :

Ոլո՛ւն, ոլո՛ւն երբ կամէր,
Ո՛հ, իւր քրտինք վասն մեր : (Կրկն.)

4. «Հա՛յր, բաժակս անցուր ինձմէ,
Ըսաւ, խնդիրքս է քեզմէ»,

Բայց կամքդ ըլլայ Թող նորէն,
Կրկնեց այսպէս հեգորէն :

Ոլո՛ւն, ոլո՛ւն երբ կամէր,
Ո՛հ, իւր քրտինք վասն մեր : (Կրկն.)

5. Գալով զանոնք գտաւ ի քուն,
Զի, աչքերնին վազէր քուն,
«Է՛ր չկըցար մ'նալ արթուն,
Ժամ մը, ըսաւ, Սի՛մոն դուն» :

Ոլո՛ւն, ոլո՛ւն երբ կամէր,
Ո՛հ, իւր քրտինք վասն մեր : (Կրկն.)

6. Գնաց, խնդրեց նոյնն կրկին,
Գարծաւ քովը երեքին,
«Արդ՝ հանգչեցէք ալ. ըսաւ,
Զի՛ բաւ է. ժամը հասաւ :

Ոլո՛ւն, ոլո՛ւն երբ կամէր,
Ո՛հ, իւր քրտինք վասն մեր : (Կրկն.)

«Թագաւորի»

Գ. ԶԱՔԱՐԵԱՆ

1927 Յունիս 7


Մարկ. Ժ. 32-42

Մարտի

Ղուկ. Ի. 39-46

ՀԱՆՐԱՊԵՏԱՆԵՐՈՒ

ՊԱՏՈՒԼՆԵՐ ԱՍՏՈՒԾՈՅ ԽՕՍՔԻՆ ԱՌՆՈՒԱԾ



Ա. «Նոր պատուիրան մը կուտամ ձեզի որ մէկգմէկ սիրէք, ինչպէս ես ձեզ սիրեցի, որ դուք ալ մէկգմէկ սիրէք» : Յովհ. Ժ. 34 :

Բ. «Եղբայրսիրութեան մէջ իրարու վրայ զորովալից եղէք, պատուելու մէջ իրարմէ անցէք» : Հովգմ. Ժ. 10 :

Գ. «Իրարու նեղութիւնները կրեցէք, եւ այնպէս Բրիտանոսի օրէնքը կատարեցէք» : Գաղ. 2. 2 :

Դ. «Եւ իրարու վրայ հոգ տանինք՝ սիրոյ եւ բարեգործութեան զրգոնելով, եւ մէկտեղ ժողովուրդ չլծողունք, ինչպէս ոմանք սովորութիւն ունին, հապա մէկգմէկ յորդորենք, ու այնչափ աւելի՛ որչափ ան օրուան մօտենալը կը տեսնէք» : Եբր. Ժ. 24-25 :

Ե. «Իրարու հիւրասիրութիւն ցուցուցէք, առանց արտունջ ընելու» : Ա. Պետ. Դ. 9 :

Զ. «Ուստի ստութիւնը մէկգի ձգելով՝ ճշմարտութիւն խօսեցէք ամէն մէկդ իր ընկերին հետ, վասնզի մենք իրարու անդամներ ենք» : Եփես. Դ. 25 :

Է. «Ամէն ատեն ուրախ եղէք : Անդադար աղօթք ըրէք» : Ա. Թեո. Ե. 16-17 :

Ը. «Խօսքը քարոզէ, մտադրութեամբ զործիդ պարապէ ատենին ու ատենէ դուրս, յանդիմանէ,

սաստէ, յորդորէ ամենայն երկայնատեւթեամբ ու վարդապետութեամբ»։ Բ. Տրմ. Դ. 2 :

Թ. «Եւ մի գինովնաք զինիս, որուն մէջ անառակութիւն կայ, հապա հողիս վեցուցեք»։ Եփես. Ե. 48 :

Ժ. «Եւ ըսաւ անոնց, զացէք բոլոր աշխարհ, ու աւետարանը քարոզեցէք բոլոր ստեղծուածներուն»։ Մարկ. Ժ. 2. 13 :

ԺԱ. «Հապա ձեզի դոնձեր զիգեցէք երկինքը, ուր ոչ ցեցը եւ ոչ ժանգը կ'ապականէ, ու ոչ գողերը պատ կը ծակեն եւ կը գողնան»։ Մատթ. 2. 20 :

ԺԲ. «Ամէն մէկը ինչպէս իր սրտովը կը յօժարի՝ թող այնպէս ապ, ոչ թէ արտօնութեամբ կամ ստիպմամբ. վասնզի Աստուած յօժարակամ տուողը կը սիրէ»։ Բայց կարող է Աստուած բոլոր շնորհքները՝ ձեզի առատօրէն տալ, որպէսզի ամէն բանի մէջ ամէն առեւ բոլոր ձեզի պէտք եղածը սննդաւորով՝ ամէն բարի գործերով առատանաք»։ Բ. Կորնթ. Թ. 7-8 :

ՄԱՆԿԱՆՅ ՍԻՒՆԱԿ

ԱՆԱՌԱԿԸ

— «Ինծի ապտակ մը զարկաւ, սկսողը ինք էր» :

— «Ի՞նչ պատճառաւ» :

— «Զինքը «աղտոտ գող» անուանեց» :

— «Ուրեմն դուն էիր սկսողը» :

— «Ո՛չ, ան ինծի ապտակ մը զարկաւ» :

— «Դուն փոխարինեցի՞ր» :

— «Տոկոսովը» :

— «Գործատէրը որ ներկայ էր, ամէն բան լսած էր, եւ ինչո՞ւ համար քեզ ճամբեց, որովհետեւ կո՛ւրդուն սկսար : Բայց եւ քեզի համար միջնորդեցի գործատէրին ու ան կը հաւանի քեզ կրկին ընդունիլ, պայմանաւ որ ընկերոջմէդ ներում ինչպէս» :

— Ներում ինչպէ՞ր, ընկերոջմէս, ե՞ս, ահա աղուոր պատմութիւն մը, ան բնաւ լմ ընկերս չէ, ես ո՛ւր, ինք ո՛ւր : Ես պարկեշտ տղայ մըն եմ, մայրիկիս մէկ հատիկ սիրելի տղան, գործարանին լաւագոյն գործաւորներէն մին, եւ հիմա երթամ այդ անճոռնի տղայէն ներում ինչպէ՞ս, երբե՛ք, երբե՛ք : Դա անկարելի բան է, իմ պատիւիս եւ աստիճանիս իսկ չեմ իջեցներ իրեն հետ տեսնուելու, ի՛նքը «գող» մըն է» :

— «Դիտե՞ս թէ երէկ ո՞ւր կ'երթայի, երբ քեզի հանդիպեցայ ճամբուն վրայ» :

— «Ո՛չ, չեմ գիտեր» :

— «Աստղիկին* տան վարձքը տալու կ'երթայի. գիտե՞ս թէ որչափ էր» :

— «Երբեք ինծի ըսուած չէ» :

— «Գանձապետին սեղանին վրայ 3, 4, 5 եւ ուրիշ քանի մը հարիւր ֆրաքնոց դրամատոմանք դրի, գիտե՞ս թէ «Աստղիկ»ի վարչութիւնը ինչո՞ւ այս մեծ ծախքը կ'ընէ» :

— «Նպատակնիդ է երիտանարդներ հրաւիրել» :

— «Բայց ի՞նչ նպատակաւ» :

— «Ժողովներ ընելու» :

— «Ինչո՞ւ համար են այդ ժողովները» :

Քիչ մը մտածելէ յետոյ,

— «Դուք կ'ուզէք զանոնք բարի ընել» :

— «Ուրեմն կը հասկնաս թէ անոնք սուրբեր չեն» :

— «Անշուշտ ոչ» :

— «Այդարեւ անոնց մէջ իւշաքանչիւրը պարտի անառակ որդւոյն նման ըսել «մեղանչեցի», սակայն ես կը ճանչնամ մէկը որ ինքզինքը այնքան բարի եւ այնքան պարկեշտ կը սեպէ, որ ապաշխարութեան երբեք պէտք չգգար եւ այդ մէկը դուն ես . . . » :

Պատանին խոսկեցաւ, արցունքի կայլակներ փայլեցան աչքերուն մէջ, զգաց թէ չէր այն ինչ որ իրեն համար ցարդ խորհած էր, նաեւ ճիշդ այդ սրբաբանին մեղքի բեռը ահագին ծանրութեամբ սկսաւ ճնշել : Ծնրադրեց եւ աղաղակեց անառակ որդւոյն նման. — «Հա՛յր մեղանչեցի քու առջեւ, ներէ ինծի» : Այս աղօթքն յետոյ հ՛ւնակ երկնային ուրախութեամբ եւ երջանկութեամբ լի, աճապարեց գանել իր գործակիցը եւ անկէ ներում խնդրել իր ըրած սխալին համար :

Ընկերը ինքզինքը այս անակնկալ պալա-գային առջեւ գտնելով, յակամայս հարցուց ինքնիրեն, «Ի՞նչ պատահեցաւ որ բարեկամս այսքան շուտով հիմնովին փոխուեցաւ» ու ինքն ալ խոնարհեցաւ Փրկչին առջեւ, ԱՆԿէ ողորմութիւն հայցելու, եւ Տէրը անոր ալ ներեց ու ընդունեց զայն :

*) «Աստղիկ» քրիստոնէական հաստատութիւն մըն է, հիմնուած 1876 ին ժընեվի (Geneve) մէջ, որու նպատակն է օգնութեան համար 15—25 տարեկան երիտասարդներու, որոնք փառցային կեանք կ'անցում են :

Հազարաւոր երիտասարդներ այս հաստատութեան ջնոքի կրցած են օգնուել եւ սիրել Գրիգորի ու այս կերպով օգնարի մեղքի ճիւղմանը :

ԹՈՒՐԿԵՐԷՆ ՄԱՍ

ՔՐԻՍՏՈՍՈՒՆ ԷՕԼԻԻԼԵՐՏԷՆ ԳԸՅԱՄԸ

Դատիմ քրիստոնէն իւր թիւար խօստը վէ պէօյիւք շայիրար Օղոստինոս պէօյիւ տէյօր։—

«Քրիստոստն էօլտիւյիւնէ թաիֆէլէր տախի ինանըրլար, լաքին քրիսթիյանըն առ իւմիտի Անըն գըյամընտա տըր»։

Կէօրմէյէրէք իման էթմիշ օլան ճիւմէ քրիսթիյանլարը քի՞մ սայապիլիք։ Շունու տէմէյէ մէնպուր իմ քի, էյէր Յովհաննէս վէ թովմաս, Պետրոս վէ Պօղոս վէ պիւնլէր վէ օն պիւնլէրճէ Յիսուստն գըյամընըն շահիւլէրի կիպի պէն տախի անըն գըյամընտա թամմ էմին օլմամըշ օլտա իտիմ, հիշ պիւր զատիկ վազը վէրմէյէճէք վէ մէնպէրէ առա չըգմազ իսթէմէյէճէք իտիմ։ Պունտան մատա էսքի վէ եէնի վազթլարըն պիւր չօզ վաիլլէր վէ քրիսթիյան շահիւլէրի տախի վար տըր։ Օ շահիւլէրտէն պիւրի տախի ճօրճ Ֆրէտէրիք չանտէլ տիւր։ Օ հայաթտա իքէն տաիմպ աբգու էտէր իտի քի քէնտի տախի Բապպըն էօլտիւյի կիւնտէ վէֆաթ էյլէտին։ Պու աբգուսու իճրա օլունտու։ 1759ըն Աւազ ուրբաթընտա քէնտի վէֆաթ էյլէտի։ Անըն էօլիւմ եաթաղընտա օլ պէօյիւք (Ա. Գօր. 15) գըյամէթ պապընըն օգունմասընը աբգու էթտի։ Նիչէ տէֆա օգունըն տուրտուրարազ «պիւր աղ տուր, պու իպարէյի պիւր տէֆա տահա թէքըրլա» տէտի։

Լօտարտա վէսթ Միսթըր Ապէյաէ քէնտի իշիւն պիւր սանէմ րէքս էտիլմիշ տիւր։ Հայաթընտա նասըլ իտի իսէ թամմ օ պէօյիւքիւք տէ Օրիլընըն էօնիւնտէ օթուրույօր։ Էլինտէ պիւր քեաղըտ իւղէրինտէ քէնտինին թէլլիլիֆ էթմիշ օլտուղու նօթալար վար, վէ իւղէրինտէ պէրրազ սուրէթտէ շու լուղէթլէրի օգույապիլէրին։ «Պիլիբիմ քի խէլաքեաբըմ Հայ տըր»։ Պու տիւրի իւմիւտ իտի քի պու պէօյիւք Մուսիգաշինտա Մէսիյան իսմինտէ թէլլիլիֆ էթմիշ օլտուղու մազամլարը մէսէրլիլ իլէ տօլտուրմուշ տըր։

Թէրճէմէ

ԳԱՅՁԸՐ

ԹԸՐԹԸՐ ՎԷ ՔԷԼԷՊԷՔ

Թապիւթ գըյամըն միտալարը իլէ տօլտ տուր։ Կիւղիւն սաշըմըշ օլուպ տա թօփուղըն գարանլըղընտա եաթմապտա օլան պիւր թօխումտան պահարտա նէ կիւղէլ պիւր ֆիտան մէյտանա կէլիւր։ Էվվէլճէ պու շէյլէր հազըղնտա պիւր քիմէնին հիշ մալիւմաթը օլմամըշ օլտա իտի, նասըլ ինանապիլէճէք իտի քի գուրու վէ էօլիւ

կէօրիւնէն պիւր աղաճ պիւր կիւն նազիք տալար, կիւղէլ շիշէքլէր վէ էնճամ մէյվլէլի հուսուլէ կէթիւրէճէք տիւր, վէ պիւր թըրթըրըն սիւրիւնտիւլիւնիւ սէյր էթտիլինտէ նասըլ խալալ էտէպիլիւ իտի քի, օ պիւրաղտան նազիք դանատը պիւր քէլէպէք օլարազ հալալտըտա ուշապիլէճէք։ Նիւնտէ վազաա տըր, սաաթ կէլիւր քի թըրթըր եօրղուն վէ գաիֆ օլարազ թազաթսըզ գալըր, քէնտի քէնտինի տար պիւր թապուլ իշիւնէ սարար, վէ օրատա կիլլիտէ գըմըլտանմա յարաղ տուրուր, թա հայաթըն նէֆէլի քէնտինէ տօգունարազ եէնի պիւր մալիւպ հալինտէ ույա նընճայա դատար։

Շու սուալը էտէպիլիլիքքի «պիւր թըրթըր վէ քէլէպէքլէրտէն չօզ էֆգալ տէյիլմիլիք»։ Նէ աճաիպ օլաճազ օլ կիւն քի գէմինին թօղու իշիւնտէն Ալլահըն էվլալարը ճէլիլ ճէսէտ իլէ քէնտի խէլաքեաբլարընա նազ օլունաճաղար։

ՊԻՐ ՇԷՀԱՏԷԹ

Սէնէլէր Էվվէլ գատիկին իքինճի կիւնիւնիւն սապահընտա իսալգ օտաճտա մահղուն օլարազ տուա էտիյօր իտիմ։ Հիւր նէ դատար խարիճէն հէր շէյ գատիկի իմա էալիյօր իտի իսէտէ տէրունիմտէ գարանլըզ վէ քէտէր հիւքմ սիւրիւյօր իտի։ Ուղուն ալարտան, հաթթա սէնէլէրտէն պէրու հասրէթ չէքալիլիլ խէլաա վէ կիւնահլար աֆվընըն թէմինաթը իշիւն թէքըր Բապպըն էօնիւնտէ տուրույօր իտիմ։ Նէ չօզ տէֆալար ալէնէն վէ կիլլիտէ Բապպա պու թէմինաթը պանա վէրմէսինի րէճա էթմիշ իտիմ իսէտէ, իման էթմէյի պիւրմէտիլիմ սէպէպտէն րէճալարըմ պօշա տիւլմիւշ իտի։ Պու խուսուստա պաազը իթիմատ էթտիլիմ միւմինլէրէ պանա եարտըմ էթմէլէրի իշիւն միւրաճաաթ էթտիմ իսէտէ պու տախի նաֆիլէյէ օլտու, չիւնքիւ կէօրմէյէրէք վէ հիսս էթմէյէրէք Բապպըն վատընա իթիմատ էթմէքտէ կիւնիւք չէքիյօր իտիմ, չօզ քէրրէ տիւլիւնիւր իտիմ քի հէր քէսէ խէլաա վար, լաքին պէնիմ իշիւն հօզ։ Պու սէպէպտէն գատիկ սապահընտա Մաղթաղալը Մայրամըն կէօզ եաշլարը Յիսուստն պօշ մէգարը էօնիւնտէ աղտըղը կիպի, պէնիմքիւլէր տախի ազալ, լաքին Մայրամըն հիւղնիւնէ տայանամալապ քէնտինի անա պէյան էտիլէք անըն մահղուն գալպինէ թէսէլիլ վէ մէսէլլէթիւրի էհաան էտէն, գըյամ էթմիշ խէլաաքեաբ պանա տախի շէֆգաթ էյլէտի։ Խաշըն ճէլիլ մէնգարէսինի րուհու վատիթաա իլէ աճաիպ սուրուլթտէ գալպիմէ ըղհար էյլէտի։ Պէրրազ պիւր սուրէթտէ անկլաաթմ քի կիւնահլարըն աղըր հիւքիւնիւ իւղէրիմտէն գալալըրարազ պէնիմ եէրիմէ քէնտիսի ճէգա չէքմիշ տիւր, վէ պէօյլէճէ պէնի գըյմէթլի

գանը վասիթաւըյլէ քէնտինէ մալ էթմիշ տիր։ Օլ վազթ շիւղհէ պուլուեթլարը պիրտէն զաիլ օլարադ վալպիմի սէմափի նսւր տօլաուլարու, քէտէր կէօզ հաշլարըմ, մէսէրրէթ կէօզ հաշլարընա թէհաւփիւլ էյլէտի։ Ուզուն սիւրմիւշ օլան վարանլըզտան սօնկրա վալպիմտէ մէյտանա կ'լէն մէսէրրէթ, սէլամէթ վէ համար քի՞մ թարիֆ էտէպիլիւր։ Մայրամ իչին զատիկին սապահը նէ տէմէք իտի իսէ պէնիմ իչինտէ կօյլէ օլաու. օլ կիւնտէն սօնկրա սէմամ տաիմա պէրրադ օլմամըշ տըր Բապպ տէրունի վէ խարիճի հայաթըմը պիր չօզ գօյու պուլուեթլարտան կէչիւրմէյի միւնասիպ սայտը, լաքին պուլարըն ճիւմէսինտէ պաազէն թէրք էտիլմիշիմ տէյու տիւշինտիւլիմ սըրալարտա պիլէ Բապպ վատը իւզրէ ալա պէնի թէրք էթմէյիպ, քէնտինի պանա տիրի ըզհար էյլէմիշ տիր։ Պէլքի պու սաթըլարը օգույանլար իչինտէ պէնիմ թէճրիպէլէրիմտէն կէչէնլէր պուլունսւր, աճիգանէ շու թափսիլէլիւր էթմէք իսթէրիմ։

1. Հէր հանկը պիր շէյ իչին իման էթմէքտէ կիւնլիւլիւն վար իսէ մէյուս օլարադ իւմիւտինի քէսմէ, գարանլըզըն ուզուն սիւրսէտէ Բապպա սիւքիւթլէ միւնթազըր օլմապտա տէվամ էյլէ։ Տիրի վէ սատըզ օլան Բապպ մութլապա սանա ճէվապ վէրէճէք տիր, Բապպտան գօրգան, անըն քէլամընը տիրկլէյլէն գարանլըզտա կէզիպտէ նսւրս օլմայան քի՞մ տիր։ Օ Բապպըն իսմինէ թէվէքքէլ էթմին վէ Ալահընա իսթինաա էյլէսին։ Եռայի 50. 10։

2. Հիսսիլաթընա կէչմիլէթ վէրմէ, սալթ սէնին իչին խաշլանմադա վէ էօլմէյէ բազի օլմուշ օլան զըյմէթլի խէլասքիարա պազ վէ կէօնէն, Յովհ. 3. 14-16։

3. Էյէր պիր վազթ գատիկին մէսէրրէթինէ մալիք իքէն էյի չօպանտան այրըլտըզըն իչին պու կիւն անտէն մահրում, լաքին եինէտէ անա հասրէթ չէքէն պիրի իսէն գօրգամ սէնի արայան վէ խասթալըզընա շիֆա վէրիպ, զըրըզընը սարան չօպանա թէպիլիմ օլ, Եզեհ. 34. 41-46։

ՊԻՐ ՄԻԻՄԻՆ

ՅԻՍՈՒՍ ՀԱԶԸՐ ՏԸՐ

Եօլ եօգուշ վէ թաշլը օլտուղունտա, այազլարըլըն թազաթը քէսիլտիյի վէ գարանլըզ պատարըզընտա . . . Յիսուս հազըր տըր։

Պաշըն տիւշիւպ գուվէթին տիւքէնտիյինտէ . . . Յիսուս հազըր տըր։

Եիւրէյին զըրըլըպ գարանլըզտա գալտըզընտա . . . Յիսուս հազըր տըր։

Եիւքին սէնի էզէճէք տէրէճէտէ աղըր օլուպ

քիմաէ օնու անկլամատըզընտա . . . Յիսուս հազըր տըր։

Իմանըն գաիֆլէնիպ իիթամա կէլմէք տէրէճէսինէ ելթիշտիյինտէ . . . Յիսուս հազըր տըր։

Կէօզլէրին կէօզ հաշլարը իլէ տօլաուղունտա վէ գօրգու սէնի սարստըզընտա . . . Յիսուս հազըր տըր։

Ֆադիր օլուպ հէր շէյտէն մահրում օլտուղունտա . . . Յիսուս հազըր տըր։

Իլթիյարըզ պէօյիւք ատըմլարլէ իլէրլէյիպ սօնուն հազլաշտըզընտա . . . Յիսուս հազըր տըր։

Անա թէպիլիմ օլ վէ իթիմատ էթ, Օ սէնին Պէօյիւք վէ էպէտի Տօսթուն տըր, հազըրտա վէ էպէտիլիքտէ սէնին խէլասքիարըն տըր։

ԶԱՆՍԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Լուրիւր Մարսէյլէն.—

Մարսէյլի մէջ Փետր. 12ին նախագահութեամբ Պալաքեան Եպիսկոպոսին, հիմը զրուեցաւ Հայ Առաքելական եկեղեցւոյ կառուցուելիք շէնքին։ Այս եկեղեցիին շինութեան ծախքերը մէկ բարերարի կողմէն կը հայթայթուի։ Կը մաղթենք որ Տէրը սոյն տաճարը, որ էլ միաձայն տաճարին ձեւովը պիտի շինուի, իսկ պէս օրհնութիւն մը ընէ շատ շատերուն։ Կը լսենք նաեւ թէ Պալաքեան Եպիսկոպոս Նիսի մէջ նոր եկեղեցի մը հիմը դրած է։

Կարեւոր ծանուցումներ.—

Ա. Բոնքերի խմբագրին Բարիկ մեկնիլը թերթիս հրատարակման օրէնք արդեւ չպիտի ըլլայ։ Խմբագրատան հասցէն նոյնը կը մնայ, ուստի նամակ, հարցումներ, յօդուածներ, զրամական առաքում, նոյն հասցէով շարունակուելու են, ինչպէս տակէ առաջ։

Բ. Բարիկի գործը քաջալերական է, կը խնդրուի որ հաւատացեալներ իրենց սղօթքներով պատերազմակից ըլլան մեզի։

Գ. Մարսէյլի Հայ Աւետ. եկեղեցւոյ գործերը ի բացակայութեան իր հովիւին, պիտի ստանձնէ Պրն. Յակոբ Զաքարիաճեան, որ մօտերս կը սպասուի Սուրիայէն։

Սուրիոյ եւ Յունաստանի գաղթականաց զրկուելիք «Բանքեր»ներուն առ հաշիւ ընդունած ենք.—

Տիկ. Արմահանեան, Իսթպըրն, 1 Անգլ. ոսկի։
Պր. Գ. Մատթէոսեան. Ս. Օպան, 50 Ֆրանք։

Le Gérant : PASTEUR KALTENBACH

Տպգր. Ա. Երեցեան, 40, Բիւ տէ Տօմինիքի - Մարսէյ